ԾՈՓՔԸ Մ.Թ.Ա. III–II ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԻՆ*

Ա. Ա. Բոբոխյան

Ողջ Հին Առաջավոր Ասիայի և Էգեիգայի տարածքում մ.թ.ա. III–II հազ. սահմանագծին տեղի ունեցած արմատական փոփոխությունները և դրանց պատճառների անորոշությունը հիմք է հանդիսացել այդ ժամանակահատվածը կոչելու «մութ դարաշրջան»[1]: Հայկական լեռնաշխարհը բնականաբար անմասն չի մնացել այդ իրավիճակից: Այս խնդրի էության ըմբռնումը Արևելյան Հայաստանի հնագիտությամբ զբաղվող մասնագետներին բաժանել է երկու հակադիր խմբերի, որոնց մի մասը փոփոխությունների պատճառ է փնտրում հասարակության ներսում (ժողովրդագրական պայթյուն), իսկ մյուս մասը՝ դրսում (էթնիկ տեղաշարժ): Ժամանակին նշվել է, որ այդ փոփոխությունների ազդակները կարող էին գտնվել Արևմտյան Հայաստանի տարածքում[2]: Ներկա աշխատանքում մեր նպատակն է Ծոփքի օրինակով ցույց տալ այս տեսակետի հավաստիության աստիճանը:

Այսօրվա դրությամբ հնագիտական տեսանկյունից Ծոփքը Արևմտյան Հայաստանի միակ պարբերականորեն ուսումնասիրված երկրամասն է, որն ընդհանուր պատկերացում է տալիս տարածաշրջանի զարգացման ուղիների մասին: Թեև Ծոփքի պատմական հուշարձանների ուսումնասիրությունը սկսվել էր դեռևս XIX դարի սկզբում, սակայն կանոնավոր պեղումներ և հետախուզական աշխատանք այստեղ իրականացվեց սկսած 1967 թվականից, երբ վերինեփրատյան Կեբանի և Կաբակայայի ջրամբարների կառուցման պատճառով լայնածավալ հնագիտական աշխատանքներ ձեռնարկվեցին Ծոփքի կենտրոնական և հարավարևմտյան շրջաններում[3]: Ներկայումս խնդրո առարկա տարածաշրջանում փաստագրված են քարի դարից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին վերաբերող բազմա-

---

* *Օգտվելով առիթից խորին շնորհակալություն եմ հայտնում Ա. Վ. Քոսյանին, Է. Վ. Խանզադյանին, Ս. Ա. Եսայանին, Պ. Ս. Ավետիսյանին, Ռ. Ս. Բաղալյանին օգտակար խորհուրդների և տրամադրած գրականության համար:*

1 B. B e l l. The dark ages in History.– AJA, vol. 75, N1, 1971, p.1.

2 *Հ. Ա. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Հայաստանը Միջին բրոնզի ժամանակաշրջանում. Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, էջ 158:*

3 H. F. R u s s e l . Preclassical pottery of Eastern Anatolia. Oxford, 1980, p.11–17; I. A c a r o g l u. The Keban Project .– Archaeology, vol. 22, N4,1969,p 319.

թիվ հուշարձաններ՝ գլխավորապես բնակավայրեր: Մեզ հետաքրքրող բրոնզ-երկաթեդարյան բնակավայրերը Ծոփքում ընդունված է բաժանել մեծ քաղաքների (Նորշունթեփե), փոքր քաղաքների (Թեփեջիք), գյուղերի (Դեղիրմենթեփե)[4]:

Այսպիսով, ինչ վիճակում էր գտնվում Ծոփքը մ.թ.ա. III-II հազ. սահմանին: Մեզ հաջողվեց առանձնացնել 34 հուշարձան, որոնք որոշակի տեղեկություններ են պարունակում այս ժամանակաշրջանում տեղի ունեցած գործընթացների մասին: Նրանց զարգացման օրինաչափությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ.թ.ա. III հազ. վերջում վերոհիշյալ բնակավայրերից 23-ը լքվում են, ընդ որում 3-ը՝ ավերվելուց հետո: Բնակավայրերից 7-ում շերտագրական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ ասել, արդյո՞ք գրանք լքվում են, թե ՎԲ-ՄԲ[5] անցումը շարունակական է: Դրանցից 12-ը վերաբնակեցվում են ՄԲ-ի սկզբում, 12-ը՝ Վե-ի, 4-ը՝ անտիկ և միջնադարյան շրջանում, 2-ը՝ լիովին լքվում են և այլևս չեն բնակեցվում: ՄԲ-ի սկզբում հիմնվում են ընդամենը 4 նոր բնակավայրեր: Անհրաժեշտ է նշել, որ ՄԲ-ի մշակույթը լավ ներկայացված է միայն 4-5 հուշարձաններում (տես աղյուսակը)[6]: Դիտարկենք մի քանի բնակավայրերի հնագիտական իրողությունները:

Այս տեսանկյունից հատկապես հետաքրքիր է Քորուջութեփեի շերտագրությունը: E հորիզոնի (ՎԲ III A) վերջում Քորուջութեփեի հիմնական՝ վերին մասը լիովին լքվում է, բնակավայրը տեղափոխվում է ստորին մաս, և հաջորդ՝ F հորիզոնում (ՎԲ III B) բնակության հետքերն ավելի են կրճատվում: Սա, ըստ պեղող հնագետի, ավանդույթի խզում էր: Թեև F և G (ՄԲ I) հորիզոնների միջև չկա մեծ շերտագրական խզում, բայց G-ում բնակավայրը նորից մեծանում է՝ արդեն պարունակելով լիովին այլ մշակութային տարրեր[7]:

Հաջորդ խոշոր կենտրոնում՝ Նորշունթեփեում, քիչ այլ իրավիճակ է: VI հորիզոնի ընթացքում (ՎԲ III B) վերջինս տարածաշրջանի խոշոր կենտ-

---

4 Ch. B u r n e y. Aspects of the excavations in the Altinova.– AS, vol.30, 1980, p.160.

5 Կիրառում ենք հետևյալ համառոտագրությունները՝ ՊԴ–պղնձի դար (վաղ–4500–3500 թթ.; ուշ–3500–3000թթ.), ՎԲ–վաղ բրոնզ (ՎԲI–3000–2600թթ., ՎԲII–2600–2300թթ.; ՎԲ III A–2300–2150թթ., ՎԲIIIB–2150–2000թթ.), ՄԲ–միջին բրոնզ (ՄԲI–2000–1800թթ.; ՄԲII–1800–1600թթ.), ՈՒԲ–ուշ բրոնզ (ՈՒԲI–1600–1400թթ.; ՈՒԲ II–1400–1200թթ.), Վե–վաղ երկաթ (1200–800թթ.). բոլորը մ.թ.ա.: Վերոհիշյալը ծոփքյան ժամանակագրական սանդղակի առավել ընդունված տարբերակն է:

6 ՎԲ-ից ՄԲ-ին անցումային շրջանի խնդիրները լավ չեն ուսումնասիրված, և պեղված բնակավայրերի շերտագրությունը շատ դեպքերում պարզ չէ: Հետևապես ամբողջական պատկեր ստանալու համար ստիպված ենք լինելու խիստ ծանրաբեռնել հղումները: Դրանից խուսափելու համար այստեղ նշում ենք հիմնական սկզբնաղբյուրները և գրանք հղում միայն անհրաժեշտության դեպքում.– In: KP, N 1–7. Ankara, 1970–1982 (մոտ 100 հոդված) ; M. O z d o g a n. Lower Euphrates 1977 survey. Istanbul, 1977; Korucutepe, vol. 1-3, Amsterdam–New York–Oxford, 1975–1980.–JNES, 1973-1974 (10 հոդված Քորուջութեփեի մասին).

7 M. V a n L o o n. Korucutepe excavations (1969).–KP, N 2, 1971, p. 59–69.

բոնն էր, տեղական կառավարչի նստավայրը, որի մասին վկայում են իոշոր պալատական շինությունը՝ իր տարաբնույթ սենյակներով և պաշտպանական համակարգը: Սակայն այս հորիզոնի վերջում բնակավայրը հրկիզման է ենթարկվում և ժամանակավորապես լքվում: V հորիզոնի (ՄԲ I) սկզբում Նորշունթեփեն վերաբնակեցվում է՝ կորցնելով սակայն նախորդ շրջանի շուքը[8]:

Նման գործընթացներ են նկատվում հարևան Թեփեջիքում: ՎԲ-ի վերջին վերաբերող 8-10 շերտերը ավարտվում են հրկիզումով, և քաղաքը լքվում է: ՄԲ-ի սկզբում, երբ բնակավայրը վերականգնվում է (3 a-b, 3 c-7), մենք արդեն գործ ունենք այլ մշակութային միջավայրի հետ[9]:

Պակաս հետաքրքիր չեն Իմիկուշաղիի տվյալները: Վերջինս պատկանում է այն բացառիկ բնակավայրերի թվին, որոնք հիմնադրվել են ՎԲ - ՄԲ անցումային փուլում: Այսպես, եթե 14-րդ շինարարական շերտը (ՎԲ - ՄԲ անցումային) բնութագրվում է Ծոփքի ՎԲ - ին յուրահատուկ գունազարդ խեցեղենով, ապա հաջորդ՝ 13-րդ շերտում ի հայտ է գալիս տարածքին խորթ հյուսիս-միջագետքյան՝ խաբուրյան և Անդրկովկասին ու Պարսկահայքին բնորոշ՝ «ուրմիական» խեցեղենը[10]:

Ստացված պատկերը համապատասխանում է Ծոփքի հետ մոտ կամ հեռու մշակութային ազգակցության մեջ գտնվող գրեթե բոլոր տարածքների համաժամանակյա իրավիճակին: Այսպես, պարզվում է, որ Փոքր Հայքում (Սիվաս–Մալաթիա շրջանում) ուսումնասիրված ՎԲ - ի 28 բնակավայրերից միայն 3/4 մասն է շարունակում իր գոյությունը ՄԲ - ում, Ուրֆայի շրջանում՝ 12-ից 9-ը, Կոմմագենեում 9-ից 6-ը[11]: Ավերածության հետքերով են ավարտվում հարակից Մալաթիայի Արսլանթեփե VI D (ՎԲ - վերջ), Բարձր Հայքի Կարազ XI–VII (ՎԲ III), Ուրմիայի շրջանի Գեոյթեփե, Յանիկթեփե հուշարձանների ՎԲ - ի վերջի շերտերը: Մեծ մասամբ լքվում են անդրկովկասյան բնակավայրերը, իսկ նրանցից մի քանիսի ՎԲ III վերին շերտերում նկատվում են ավերածության հետքեր (Ամիրանիս Գորա, Շենգավիթ IV, Կվացխելերի-Խիզանաթ Գորա B, Քյուլթեփե II)[12]: Նմանապես ողջ Անատոլիայում նկատվում են բնակատեղիների լքում, ավերածություններ, քոչվորության աճ. բնակավայրերի քանակը նվազում է 75տոկոսով[13]:

Չնայած նմանություններին, այնուամենայնիվ, յուրաքանչյուր շրջան ունեցել է զարգացման իր առանձնահատկությունները, որոնց ար-

---

8 H. Hauptmann. Die Grabungen auf dem Noršun-Tepe (1972).– KP, N5, 1976, S.126.

9 U. Esin. Tepecik (1974).– AS, vol. 25,1975, p. 130.

10 V. Sevin. Imikusaği (1983).– AS,vol. 34 ,1984, p. 249–50.

11 J. Jakar, A. Gürsan-Salzmann. Archaeological survey in the Malatya and Sivas provinces (1977).–Tell-Aviv, vol. 6 ,1979, p. 51; M. Özdogan. Op. cit., p .117,173.

12 К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили. Древние культуры Южного Кавказа. Л.,1970, с. 100,110,177; A. G. Sagona. The Caucasian region in the Early Bronze Age. Oxford, 1984, p.81.

13 J. Mellaart. Anatolia c. 4000–2300 B.C.-CAH, vol.1, N18,1965, p.46–7.

մատները թաքնված են տվյալ տարածքի ընդհանուր պատմական զարգացման օրինաչափությունների մեջ: Հասկանալու համար մ.թ.ա. III–II հազ. սահմանի ճգնաժամի էությունը անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադառնալ Ծոփքի ընդհանուր զարգացման ընթացքին՝ ըստ հնագիտական ժամանակաշրջանների:

Նեոլիթ – ինչպես ցույց են տալիս հնագիտական ուսումնասիրությունները մ.թ.ա. VIII-VI հազարամյակներում Ծոփքը եղել է խիտ բնակեցված: Զարգացվածության փայլուն օրինակը Զայոնյուն է, սակայն կան ավելի մեծ՝ նախա- և ետկերամիկական նեոլիթին վերաբերող, բայց չուսումնասիրված բազմաթիվ բնակավայրեր՝ բնորոշ են ուղղանկյուն կացարաններ, տեղական գիմագծերով՝ մետաղին ծանոթ մշակույթ[14]:

ՊԴ – այն ժամանակ, երբ Մուշի և Վանի շրջանում բնակավայրերը աննշան են, Ծոփքում գրանք բավականին թիվ են կազմում (հայտնի են շերտագրական տվյալներով 10 բնակավայր): Տարածվում են հիմնականում դաշտավայրերում: Բնորոշ են ուղղանկյուն կացարաններ, տեղական, ինչպես նաև խալաֆ-ուբեյդյան խեցեղեն, ինտրամուրիալ՝ երբեմն կարասային, թաղումներ: ՊԴ-ի վերջում Ծոփքը գտնվում էր ուրուկյան գաղութային համակարգի գոտում: Աստիճանաբար այստեղ թափանցում են Կուր-արաքսյան մշակույթի կրողները[15]:

ՎԲ– նկատվում է բնակավայրերի քանակի մեծ աճ: Բնակեցվում են նաև լեռնային և նախալեռնային շրջանները: ՊԴ-ում հիմնված բնակավայրերը շարունակում են գոյությունը ՎԲ-ում: Մոտ մ.թ.ա. 3000թ. ավերվում է Քորուջուլթեփեն, որ թերևս վկայում է նոր տարրերի ներթափանցման մասին: ՎԲ I վերջնականորեն հաստատվում է Կուր-արաքսյան մշակույթը, որը մոտ է Ջավախքի տարբերակին, բնորոշ են ուղղանկյուն կացարաններ, որոնք մասամբ փոխարինվում են կլորներով: ՎԲ II-ը մոտ է Կուր-արաքսյան մշակույթի Արարատյան գաշտի տարբերակին, բնորոշ են տեղական՝ ուղղանկյուն և անդրկովկասյան՝ ձողուններով կացարանները: Տեղական մշակույթի կարևոր ցուցիչը յուրահատուկ գունազարդ խեցեղենն է: ՎԲ III Ծոփքը շարունակում է մնալ Արարատյան գաշտի ազդեցության ոլորտում: Շարունակվում է ուղղանկյուն և ձողուններով կացարանների, ինչպես նաև անոթների գունազարդման ավանդույթը: Խիստ ակտիվանում է կապը արտաքին աշխարհի հետ, որի շնորհիվ տարածքը թևակոխում է պետականության փուլ[16]:

ՄԲ – անկում է ապրում Կուր-արաքսյան մշակույթը, լքվում է բնակավայրերի մեծ մասը, խորանում է տարածքի լոկալությունը, խզվում են նախկին ակտիվ կապերը Անդրկովկասի հետ: Բնորոշ են ուղղանկյուն կացարաններ, առկա է խեցեղենի մեծ բազմազանություն (գերիշխում են

---

14 M. J. Mellink. Archaeology in Anatolia.- AJA, vol.94, N1,1990,p. 127.

15 H. F.Russel. Preclassical pottery of Eastern Anatolia, p. 54.

16 Ch. Burney, D. M. Lang. The Peoples of the hills. London, 1971, p. 31; A. G. Sagona. Op. cit., p. 99.

անատոլիական տեսակները), Անդրկովկասի հետ կապը փաստում է ոչ մեծաքանակ «ուրմիական» խեցեղենը: Միակ էական անցումային չափանիշը ՎԲ - ՄԲ -ի միջև տեղական գունազարդ խեցեղենն է, որն աստիճանաբար գնում է դեպի անկում[17]:

ՈՒԲ - բնակավայրերի և մշակութային օրինաչափությունների զարգացման իմաստով ՈՒԲ - ը հիմնականում շարունակում է ՄԲ - ի ավանդույթները. ավելի են խորանում կապերը կենտրոնական Անատոլիայի հետ: Մոտ մ.թ.ա. 1650 թ. Ծոփքի գրեթե բոլոր բնակավայրերը ավերվում են (նույնը տեղի է ունենում Դինկայում, Հաֆթավանում՝ Ուրմիայի ավազան, Ուզերլիկում՝ Անդրկովկաս, ևն), ինչն ավելի շուտ կապված է քաղաքական իրադարձությունների (Միտաննի–Խաթթիի պայքարը), քան էթնիկ տեղաշարժերի հետ[18]:

ՎԵ – նախորդ շրջանի համեմատությամբ բնակավայրերը աճում են 50 տոկոսով, վերաբնակեցվում է նաև ՎԲ - ի վերջում լքված բնակավայրերի զգալի մասը: Մշակույթը լիովին փոխվում է և կապվում նոր էթնիկ տարրերին՝ մասնավորապես մուշկերին: Վերականգնվում են ակտիվ կապերը Անդրկովկասի հետ[19]:

Ուրարտացիների կողմից Ծոփքի գրավումը և այդ ժամանակաշրջանին վերաբերող նյութական մշակույթի հետքերի սակավությունը, կարծես արտահայտում է Ծուպանիի բնակչության Արարատյան դաշտ տեղափոխվելու փաստը՝ ուրարտական արքա Արգիշտի I-ի օրոք: Հնագիտորեն փաստագրված է սկյութների առկայությունը Ծոփքում մ.թ.ա. VIII-VII դարերում[20]: Այս ամենով հանդերձ, Ծոփքի պատմության զարգացման օրինաչափությունները նույնանում են Հայկական լեռնաշխարհի այլ շրջանների հետ:

Սակայն Ծոփքյան իրականությունը ունեցել է նաև իր առանձնահատկությունները, որոնք գրեթե միշտ եղել են՝ 1)Խիտ բնակեցվածությունը, 2) Զարգացածությունը՝ Հայկական լեռնաշխարհի այլ շրջանների համեմատությամբ, 3) Անընդհատական կապը հարևան քաղաքակիրթ տարածաշրջանների հետ, որն եղել է նախ և առաջ նրա դիրքի և բնական հարստությունների արդյունքը[21]: Այս ամենը անպայմանորեն անհրաժեշտ է

---

17 A. M. Conti, C. Persiani. Cultural development in Eastern Anatolia in the Early Bronze Age.– In: Between the Rivers and Over the Mountains , Roma, 1993, p. 384–5; C. E d e n s. Transcaucasia at the end of the Early Bronze Age.– Bulletin of the American Schools of Oriental Research. Vol. 299-300, 1995, p.53.

18 Ա. Վ. Ք ո ս յ ա ն. Իսուվան (Ծոփքը) մ.թ.ա. XIII–XII դարերում.– ՊԲՀ, N 1,1997, էջ 177–192;
M. van Loon . Korucutepe excavations (1969).– KP, N 2, 1971,p. 63.

19 Ա. Վ. Ք ո ս յ ա ն. «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը.– ՊԲՀ, N1–2,1996, էջ 217:
V. S e v i n. The Early Iron Age in Elazig region.– AS, vol. 41, 1991, p. 95.

20 H. H a u p t m a n n. Neue Funde eurasischer Steppennomaden.– In: Beitrage zur Altertumskunde Kleinasiens , Meinz am Rhein, Bd. 1, 1983, S. 251.

21 G. K u n t e l i a n. Notes sur les monuments Arméniens de la region de Kharput.– ՀԱՆՄՍ, II, Երևան, 1981, էջ. 211.

հաշվի առնել մ.թ.ա. III–II հազ. սահմանի հանգույցը լուծելիս: Վերոհիշյալ ակնարկից պարզ է, որ խնդրո առարկա ժամանակաշրջանը իր բնույթով չի հանդիսացել միակ բարդը. էթնիկ տեղաշարժերը և ավերածությունները միշտ ուղեկցել են այս շրջանի բնակիչներին, և դրանք կարող էին կատարվել նույն օրինաչափություններով: Այժմ տեսնենք, թե որոնք են եղել այն գործոնները, որ հիմք կարող էին հանդիսանալ Ծոփքում «մութ դարաշրջանի» համար՝ խնդրո առարկա ժամանակաշրջանում.

1) Բնական աղետներ – *Հաշվի առնելով այն հանդամանքը, որ մ.թ.ա. III–II հազ. սահմանի անկայուն իրավիճակը համընդհանուր է ողջ հին աշխարհում, մասնագետների մի զգալի մասը դրանում տեսնում է մեկ միասնական պատճառ՝ հանձինս կլիմայական պայմանների վատթարացման: Դա հաստատվում է ինչպես հնակլիմայաբանական, այնպես էլ գրավոր աղբյուրների տվյալներով*[22]*:*

2) Էթնիկ ներթափանցում – *Մենք խնդիր չենք դնում մեր առջև լուծելու այն հարցը, թե ովքեր էին ապրում Ծոփքում մ.թ.ա. III հազ.՝ խուրրիները թե հնդեվրոպացիները: Ավելի կարևոր է ճշտել, թե մշակույթի փոփոխման հետ արդյոք տեղի է ունեցել էթնոսի փոփոխություն: Անատոլիական հնագիտության մեջ նոր էթնոսի հայտնվելը մ.թ.ա. III–II հազ. սահմանին կապվում է կապադովկիական՝ գունազարդ և «խեթական» խեցեղենի ի հայտ դալու, ինչպես նաև բնակավայրերի ավերածությունների հետ: Ընդ որում, որպես կանոն, այս ամենը վերագրվում է խեթերին*[23]*: Նույն օրինաչափությամբ Ծոփքում ի հայտ է գալիս ՄԲ I -ում կենտրոնաանատոլիական «խեթական» միագույն խեցեղենը, որը շարունակում է իր գոյությունը մինչև ՈԻԲ - ի վերջը, ավերվում են բնակավայրերը, տեղական գունազարդ խեցեղենում նկատվում է կապադովկիական ավանդույթի ազդեցությունը: Եթե սրան ավելացնենք խեթական ճարտարապետության տարածումը, նյութական մշակույթի նոր տարրերի ի հայտ դալը, ապա տրամաբանական կլիներ այս ամենը վերագրել նոր էթնոսին:*

3) Ներքին ժողովրդագրական փոփոխություն – *Եթե հաշվի առնենք այն հանդամանքը, որ գունազարդ խեցեղենը Ծոփքում անընդհատ զարգանում է ՎԲ - ից ՄԲ, իսկ «խեթական» խեցեղենը կարող էր լինել քաղաքական ազդեցության արդյունք, որ ՄԲ - ի խեցեգործության մեջ մեծապես պահպանվել է Կուր-արաքսյան մշակութային ավանդույթը (Ու. Էսին), ապա նույնքան տրամաբանական կլիներ վերը նշված փոփոխությունները համարել ներքին զարգացման արդյունք՝ չբացառելով մասնակի էթնիկ ներթափանցումը*[24] *: Այդ ժամանակ ինչպե՞ս բացատրել բնակավայրերի լքումը և ավերվածությունները: Հայտնի է, որ բնակավայրերի լքումը կապվում է նաև քոչվորության աճի հետ, իսկ հին արևելյան մար-*

---

22 W. N u t z e l . The climate changes of Mesopotamia and bordering areas.– Sumer, vol. 32,1976, p. 21.

23 R. A. C r o s s l a n d . Immigrants from the North.– CAH, vol.1, N 27,1964, p.21; O. R. G u r n e y. Anatolia c. 1750–1600 B.C.– CAH, vol. 2, N 6, 1965, p. 6.

24 U. E s i n . Tepecik (1974).- AS,vol. 34,1975, p. 48 ; Ch. B u r n e y. Aspects ..., p. 163.

դու մտածելակերպում «քոչվորությունը միջոց էր աղքատությունից դուրս գալու համար»[25]: Նույնը կարող էր տեղի ունենալ նաև Ծոփքում, ուր մինչև օրս էլ զուգակցվում են նստակեցությունը և քոչվորությունը[26]:

4) Քաղաքական գործոնը – Եթե տրամաբանական է վերն ասվածը, ապա ինչպե՞ս հասկանալ կրակի հետքերով ավերածությունները: Նորշունթեփեի և Թեփեջիքի ավերումը մ.թ.ա. III հազ. վերջին, բացի էթնիկ ներխուժման հետ կապելուց, փորձ է կատարվել բացատրելու քաղաքական դրդապատճառներով՝ այն վերագրելով աքքագացիներին[27]: Նշյալ ժամանակաշրջանում պետականության գոյությունը Ծոփքի տարածքում ակնհայտ է: Փորձեր են կատարվել Ծոփքի հետ առնչելու մ.թ.ա. III հազ. վերջում II հազ. սկզբում հիշատակվող այնպիսի տեղանուններ ինչպիսիք են Սուբարտուն, Խախումը, Ծուպանան, Դեգիշանան ևն[28]: Հարուստ մետաղահանքերի առկայությունը, առևտրական կարևոր ճանապարհների խաչմերուկում գտնվելը չեն բացառում նրա տարածքի՝ քաղաքական իրադարձությունների համար մշտական թատերաբեմ լինելը:

Եզրակացնելով՝ ճիշտ կլիներ նշել, որ մ.թ.ա. III–II հազ. սահմանին տեղի ունեցած փոփոխությունները վերոհիշյալ չորս գործոններից որևիցե մեկի մենաշնորհը չէին, այլ, թերևս, դրանց ներդաշնակության հետևանքն էին: Ծոփքում հնի և նորի բախման հետևանքով ծնվեց մեկ այլ միջավայր, որն իր մեջ պարունակում էր և՛ ավանդույթը, և՛ նորույթը: Դժվար է պարզել այն առանձին էթնոսների դերը, որոնց կարելի կլիներ վերագրել այս կամ այն մշակութային իրողությունը: Թվում է, ինչպես դասական շրջանում, այնպես էլ այս ժամանակահատվածում, Ծոփքը, որպես «կոնտակտային գոտի», բազմաէթնիկ է եղել: Գուցե այն հանգամանքը, որ Ծոփքի «մայրաքաղաքները» անընդհատ փոխվել են (մ.թ.ա. III հազ. – Նորշունթեփե, մ.թ.ա. II հազ. – Քորուջութեփե, մ.թ.ա. II հազ. վերջ – Նորից Նորշունթեփե), վկայում է էթնիկ խմբերի կամ վերնախավի զարդացման ընթացքի մասին:

Ի վերջո, ի՞նչ կտա Ծոփքի հնագիտության ուսումնասիրությունը Արևելյան Հայաստանի հնագույն անցյալի խնդիրների ընկալման համար: Թեև այդ տարածաշրջանների միջև գոյություն ունեն տարբերություններ (օր. Ծոփքի ՎԲ - ՄԲ անցումային և ՄԲ հուշարձանները հիմնականում ներկայացված են բնակավայրերով, մինչդեռ Անդրկովկասում՝ դամբարան-

---

25 Հմմտ. I. Finkelstein. Observations on the socio-demographic structure of the intermediate Bronze Age.– Levant, vol. 21, 1989, p. 132.

26 Britannica, vûl. 28, 1988, article "Turkey", p.892,896.

27 M.J. Mellink. Archaeology in Asia Minor.- AJA, vol.75, N 2, 1971, p. 161.

28 J. Lewy. Old Assyrian evidence concerning Kussara.– AA, vol.II, N 1–2, 1965, p. 301; Ch. Burney. Contact and conflict in north-western Iran.– Iranica Antiqua, vol. 29,1994, p. 52; Հմմտ. Հ. Մ. Ավետիսյան. Հայկական լեռնաշխարհի և հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. 17–9-րդ դարերում. Երևան, 1997 (պ.դ.դ. կոչմանը հայցող սեղմագիր), էջ 15.

ներով), սակայն նույնությունները ավելի շատ են (երկու տարածքներն էլ գտնվել են Կուր-արաքսյան մշակույթի սահմաններում, որն երկու շրջաններում էլ անկում է ապրել գրեթե նույն ժամանակահատվածում միևնույն երևույթների տարածմամբ՝ բնակավայրերի լքում, քոչվորության աճ, առևտրական հարաբերությունների աշխուժացում, դասակարգային հասարակության ստեղծում՝ մի տարբերությամբ, որ հիշյալ տեղաշարժերն ավելի արագ են ընթացել Ծոփքում շնորհիվ իր բարենպաստ աշխարհագրական դիրքի): Հարց է առաջանում՝ ինչպիսի ազդեցություն կարող էր ունենալ այս պարագայում Ծոփքը Անդրկովկասի վրա:

Բազմիցս նշվել է Անդրկովկասի ՄԲ - ի գունազարդ խեցեղենի կապը Առաջավոր և Փոքր Ասիայի ավանդույթների հետ, մյուս կողմից էլ համադրվել է Անդրկովկասի և Ծոփքի գունազարդը: Այս հանդամանքը չի բացառում Ծոփքի միջնորդային դերը[29] : Ինչ վերաբերում է «խեթական» կոչված կենտրոնաանատոլիական միագույն խեցեղենին, ապա Ծոփքի դերը Անդրկովկասի համար անվիճելի է[30]: Ծոփքի, և ընդհանրապես Արևմտյան Հայաստանի հետ կարող էին կապվել անդրկովկասյան իրականության բազմաթիվ այլ երևույթներ, որոնց ուսումնասիրությունը ավելի լայն հնարավորություններ կընձեռի Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության ճիշտ ընկալման համար:

Ստորև ներկայացնում ենք մ.թ.ա. III-II հազ. սահմանի Ծոփքի հուշարձանները և պատմաժողովրդագրական գործընթացները բնորոշող աղյուսակ.

Համառոտագրությունների ցանկ.

ՊԲՀ – Պատմա - Բանասիրական Հանդես.
ՀԱՆՄՍ - Հայ Արվեստին Նվիրված Միջազգային II Սիմպոզիում.
AA – Anadolu Arastirmalari.
AJA – American Journal of Archaeology.
AS – Anatolian Studies.
CAH – Cambridge Ancient History.
JNES – Journal of Near Eastern Studies.
KP – Middle East Technical University Keban Project Publications, Serial I /1–7.

---

29 *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն . Էլառ-Դարանի. Երևան,1979, էջ 65, 68: Ս. Ե ս ա յ ա ն. Գ. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. Բրոնզեդարյան գունազարդ խեցեղենի նորահայտ նմուշներ.– ՊԲՀ, N 2, 1971, էջ 279.*

30 Г. Е. А р е ш я н. Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века.– Советская археология, N 4,1973, с. 40.

Բնակավայրերի տեղաբաշխումը	Ուսումնասիրման ձևը և ուսումնասիրողները	Բնակավայրերի չափը	Բնակեցման ժամանակը	ՎԲ - ՄԲ անցումային իրավիճակը	Վերաբնակեցումը
Խարբերդ/ Աշվան	Պեղումներ 1968-75	երկ./լայն./բարձր.-մ.			
1. Թաշկուն Կալե*	- Ս. Հելմս	150/150/20	II,VII, VIII	2	7
2. Նորշունթեփե*	- Հ. Հաուպտման	600/400/25	I, II-VI	2	4
3. Թեփեջիք*	- Ու. Էսին	200/200/10	III-VIII	2	4
4. Քորուջութեփե*	- Մ. Վան Լուն	220/150/17	I, II, III,IV, V,VIII	1	4
5. Թյուլինթեփե*	- Ու. Էսին	260/210	I, II, III-V, VII, VIII	1	4
6. Դեղիրմենթեփե*	- Ռ. Դուրու	106/150/7	II, V	1	5
7. Աշվան Կալե*	- Դ. Ֆրենչ	125/95/15	II,V, VII, VIII	1	5
8. Թաշկուն Մանկի*	- Դ. Ֆրենչ	190/120/25	I,II	1	6
9. Քալայջիք*	- Ու. Սերդարօղլու	130/70/30	I-III, VII, VIII	1	5
10 .Աղին*	- Ու. Սերդարօղլու		I-III, VII, VIII	1	4
11. Քյոոթեփե*	- Հ. Հաուպտման	210/100/2	I-V	1	5
12. Ցենիքյոյ*	- Ջ. Քոշայ		II,V, VII,VIII	1	5
13. Պուլուր*	- Ջ. Քոշայ	120/80/20	I, II, VII	1	6
14. Հան Իբրահիմ*	- Հ. Էրտեմ	100/60/8	II,V, VII, VIII	1	5
Անձիտ	Հետախուզում 1975-7				
15. Մալթեփե*	- Մ.Օզդոդան	130/75/7	II,V, VIII		4
16. Հույուկքյոյ*	-	110/180/10	II,V, VIII		4
17. Ույուչեկթեփե*	-	110/180/14	II-IV, V, VII,VIII		4
18. Աթաֆ Հարաբեսի+	-	100/150	II, VIII	1	7
19. Կարտին +	-	50/150	III, IV, V, VII, VIII	3	
20. Նալիհասան+	-	60-տրամ.	II, V	1	5
21. Կալեքյոյ*	-		II, V, VII,VIII	1	5
22. Շահյուրդու-	-		II, V	1	5
23. Շեմսիյեթեփե*	-		I.IV		4
24. Քամիկլի հույուկ*	-	70/90/5	II-V, VIII		4
25. Հասիկլի+	-	120/70/5	III, IV, VIII	3	
26. Կիրասաթեփեսի*	-	100/100	I, II-V		4
27. Կալե I+	-	50/20/3	II, V, VIII	1	5
28. Կալե II*	-	70/190	III, V	3	
29. Կալե III*	-	40-տրամ./2-բարձր.	II, V	1	5
30. Կազ Մանկի+	-	50-երկ./25-բարձր.	II, III		4
31. Շանթեփե*	-	70/50/3	I, II, VIII	1	7
32. Հաբիբուշաղի+	-	70/80	II, V, VI	1	5
33. Հարօղլու+	-	100-երկ.	I,II, VIII	1	7
34. Իմիկուշաղի*	Պեղումներ 1982-7(Վ.Սևին)	80/90/14	III, IV,V-VIII	3	

1- լքում; 2- լքում հրկիզման հետևանքով; 3 - բնակավայրի հիմնում ՄԲ- ում; 4- վերաբնակեցում ՄԲ-ում; 5- վերաբնակեցում Վե- ում; 6- լիովին լքում ՎԲ - ից հետո; 7- վերաբնակեցում անտիկ և միջնադարյան շրջանում.

I – ՊԴ; II – ՎԲ; III – ՄԲ; IV – ՈՒԲ; V – Վե; VI –Ուրարտական շրջան; VII - Անտիկ; VIII – Միջնադար.

*- արհեստական բլուր; + - հարթ բնակավայր; - -դամբարանադաշտ. Նեղագիր - բնակավայրերի ամենահիմնական բնակեցման ժամանակաշրջանը.